

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի հունիսի 5-ի № 3 նիստի

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ ԲՊՀ) կանոնադրության 41-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով հոգաբարձուների խորհրդի 19 անդամների շրջանում անցկացված հարցման (որին պատասխանել է 17 անդամ) արդյունքները ԲՊՀ 2023 թվականի ֆինանսական աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության վերաբերյալ (17 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ)՝ ԲՊՀ հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «ԲՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/07» ծածկագրով (էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով) իրականացված Աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքները՝ որպես «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող ընտրված կազմակերպություն հաստատել **«Քրու ընդ Ասատրյանս»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Տ. ԽԱԶԱՏՐՅԱՆ